

ԼԵՋՈՒՆԳԻՏԵԿԱՆ

ՎԵՊԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆ(*)

Այն բոլոր ազգեցեությունները՝ որ նկարագրեցինք մինչև այստեղ, առհասարակ սկսել են գործել նախ քան մեր գրականությունն սկզբնաւորութիւնը։ Ոմանք այստեղ էլ վերջացել են, ինչպէս Փոքր Ասիական, ասորական, խաղեան, եւ Հայաստանի մանր ազգերի եւ Հոռովմէական ազգեցությունը։ Միւսները մեր գրականութեան հիմնադրութիւնից յետոյ էլ շարունակում են, ինչպէս են իրանական, ասորական, յունական եւ երրայական ազգեցությունները, ոմանք աւելի, ոմանք նուազ չափով։ Ապագային սկսելու են ուրիշ ազգեցություններ, այն է արաբական, վրացական, թուրք-թաթարական, էրուպական ու ռուսական, որոնց վրայ խօսելու ենք ժամանակագրական կարգով։

Նախ քան ի. դարը հայերը գրաւոր գրականութիւն չեն ունեցել։ Մինչև այդ ժամանակ հայերէն լեզուով, ո՛չ մի տող, ո՛չ մի տեսակ գրականութեամբ կամ այբուբենով գրի էլ առնուած(**)։ Նշածը միայն բանաւոր գրականութիւն էր, որ բազմազան էր ժողովրդական երգերից, զրոյցներից ու առասպելներից, որոնք երգում ու պատմում էին բերնէ բերան աւանդաբար։ Այս շրջանը կոչւում է Վիպասանական օրգան, յանուն այն երգիչների կամ վիպասանների, որոնք (յառկապէս Գողթն գաւառից) շրջում էին Հայաստանի այլ եւ այլ կողմերը եւ ժողովրդի մէջ երգում բանդիւրի վրայ այն վիպական երգերը, որ իրենք էին հնարում գիւցազների, քաջ թագաւորների եւ Նշանաւոր հերոսների վրայ։ Այս երգերից ամենամեծը մի մեծ գիւցազ-ներգութիւն էր, որ պատմում էր հայոց Արտաշէս Ա. թագաւորի, Մեծն Տիգրանի, Արտաւազդ Ա.ի, Արտաշէս Բ.ի, ինչպէս

եւ Մհերդատի, Հրադամիդդի եւ Տրդատ Ա.ի պատմութիւնը, ընդգրկելով Արտաշատի հիմնարկութիւնից (180 Ն. Ք.) մինչև Աշտնաք արշաւանքը (72 թ.), այն է բմբուղ 252 տարւայ մի շրջան(**)։ Ձեռք յիշում մնացեալ մեծ ու փոքր զանազան երգերը, որոնցով հարուստ էր այդ ժամանակի բանաւոր գրականութիւնը։

Երբ քրիստոնէութիւնը մտաւ Հայաստան, մեր սուրբ հայրերը հակառակ կանգնեցան այդ հեթանոսական երգերին, ժողովուրդը բնականաբար չէր լսում նրանց եւ իր գուարթ օրերին, խնձոյքների եւ ուրախութեանց ժամանակ զուարճանում էր նրանցով։ Փաստօրէն պատմում է թէ ինչպէս իշխան եւ ժողովուրդ արհամարհում էին կրօնաւորների քարոզները եւ սիրով ու հաճոյքով լսում միշտ իրենց այդ հեթանոսական երգերը։ Օգի ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեան, լոկ միայն իբրեւ զիրօն իմն մարդկութեան յանձինս իւրեանց եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան . . . խառնադանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախադարացն եւ կամ շինականութեանն, եթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդանեղեղ ինչ անծրեւաց սաստկութեան զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ գոյգն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի։ Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս եւեթ զբօսեալ էին . . . ընդ չքոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սողորութեանց, բարբարոս խուժաղութ միտս ունելով, եւ վիւրեանց երգս առասպելաց ըզվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կըրթութեանցն, եւ նմին հաւատացեալք, եւ ի նոյն հանապազօրեցեալք» (Բուզ, Գ. ԺԳ.)։ Երգերի հետքերը գտնում ենք զեռն ԺԱ. դարուն. բայց ինքնին հսկայանալի է որ ոչ ոք մինչև այդ ժամանակ չպիտի հետաքրքրուէր նրանց հաւաքմամբ կամ ուսումնասիրութեամբ։ Հետեւաբար եւ այդ բոլորը մեզ համար անդարձ կորած է։

(*) Վերջում մեծամեծ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (ԺԿ. Գլուխ)։

(**) Ընդարձակ անհ Անառեան, Հայոց Գրեր, էջ 106 - 129.

(*) Տե՛ս Աբեղեան, Հայ Ժող. Առասպելներ, էջ 595 - 61.

Մեր պատմահայր իորենացիին եղաւ՝ որ առաջին տեղամ ուշագրութիւն դարձրեց այդ երգերի վրայ: Յանկանալով գրել Հայոց ամբողջական պատմութիւնը և օգտուելով ամէն տեսակի աղբիւրներից, իրեն լուսամիտ մարդ՝ նա ձեռք առաւ նաև վիպասանական երգերը եւ վերակազմեց նրանցից Հայոց պատմութեան զանազան մասերը: Այս առթիւ նա մէջ է բերում ի մէջ այլոց 12 վիպասանական հատուած, 2ից մինչև 9 տող, բոլորն էլ բառացի: Ձեռք հաշոււմ այն վիպասանական հատուածները, որոնց նիւթը կամ բովանդակութիւնն է միայն յիշում: Եթէ էլ չլինէր ին-

քննացու այդ լուսամիտ մտածողութիւնը, մինք այսօր գաղափար չէինք ունենալու գողթան երգիչների և վիպասանական արուեստի գոյութեան մասին:

Իորենացուց գուրս կայ նաև երկու յիշատակութիւն. մէկը Տրդատի մասին մի կարճ հատուած է, որ աւանդում է մեզ Ագաթանգեղոսը. երկրորդը Նաւասարդի երգից մի կտոր, որ աւանդում է մեզ Մագիստրոս (Ժ. Ա. Դարից):

Այստեղ հաւաքուած ենք վերոյիշեալ բոլոր 14 հատուածները, այսինքն վիպասանական զբաղանթեան ամբողջ հատուկութիւնը:

1. — 1. Երկներ երկին, երկներ երկիր,
2. Երկներ եւ ծովն ծիրանի.
3. Երկն ի ծովուն ուներ եւ գլխամբիկն եղեգնիկ
4. Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
5. Ընդ եղեգան փող բոց ելանէր
6. Եւ ի բոցոյն վազէր խառնաւ պատանեկիկ.
7. Նա հուր հեր ուներ.
8. Բոց ուներ մօռուս,
9. Եւ աշկունքն էին արեգակունք:

ԽՈՐ. Ա. լա.

2. — 10. Հասուած գնացեալ Վարդգէս մանուկն
11. Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով,
12. Եկեալ ճատաւ զԵրեւ բլրով,
13. զԱրթիւնդ քաղաքաւ զՔասաղ գետով,
14. Կուել կոփել զուռնն Յուսանդալ արալի:

ԽՈՐ. Բ. կե.

3. — 15. Քեզ ասեմ, այլ քաջ Արաւեստ,
16. Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
17. Սկ հաւանեաց բանից աշագեղոյ դասես Ալանաց՝
18. Տալ զպատանիդ.
19. Զի վասն միոյ քինու ք' Է օրէն դիւցազանց՝
20. Զայլոյ դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
21. Կամ ծառայեցուցանել(ով) եւ ի ստրկաց կարգի պահել.
22. Եւ բեմամութիւն յաւիտեանակամ
23. Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

ԽՈՐ. Բ. ծ.

4. — 24. Եւ ուսի՞ ցացի քաջն Արաւեստ,
25. Հազարս ի հազարաց եւ բիւրս ի բիւրուց,
26. Ընդ քաջազգւոյ կոյս օրորդիս Ալանաց:

ԽՈՐ. Բ. ծ.

5. — 27. Հեծաւ արի արեան Արաւեստ ի սեւան գեղեցիկ,
28. Եւ հանեալ զուկեօզ շիկափոկ պարանն,

29. Եւ անցեալ որպէս զարծուի սրաթել ընդ գեճն,
 30. Եւ ձգեալ զոսկեօղ շիկափոկ պարանն՝
 31. Ընկեց ի մեջք օրիորդին Ալանաց,
 32. Եւ ռաօ ցաւեցոյց զմեջք փափուկ օրիորդին,
 33. Արագ հասուցանելով ի բանակ իւր:

ԽՈՐ. Բ. ծ.

- 6.— 34. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արաւիսի,
 35. Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սարինկանն:

ԽՈՐ. Բ. ծ.

- 7.— 36. Տենչայ Սաբենիկ շիկին տենչանս՝
 37. Զարախուր խաւարս եւ զօրց խաւարծի
 38. Ի բարձիցն Արգաւանայ:

ԽՈՐ. Ա. Լ.

- 8.— 39. Վիճապագունք գողացան զմանուկն Արաւազդ,
 40. Եւ դեւ փոխանակ եղին:

ԽՈՐ. Բ. կա.

- 9.— 41. Ճառ գործեալ Արգաւանայ ի պաթիւ Արաւիսի,
 42. Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիճապաց:

ԽՈՐ. Ա. Լ.

- 10.— 43. Արաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արաւիսի,
 44. Տեղեկիկ ապարանից՝ ի հիմնանալն Արաւաւու,
 45. Նա անց գնաց եւ շինեաց ի մեջ Մարաց զՄարակեթս:

ԽՈՐ. Ա. Լ.

- 11.— 46. Մինչ դու գնացեր
 47. Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարաւ,
 48. Ես աւերակացս ո՛ւմ քաղաւորեմ:

ԽՈՐ. Բ. կա.

- 12.— 49. Դու յորս հեծցիս յազանս ի վեր ի Մասիս,
 50. Զքեզ կայցին քաջ,
 51. Տարցին յազանս ի վեր ի Մասիս,
 52. Անդ կայցես եւ զլոյս՝ մի տեսցես:

ԽՈՐ. Բ. կա.

- 13.— 53. Ո տայր ինձ զծուխ ծխանի
 54. Եւ զառաւօսն Նաւասարդի.
 55. Զվազելն եզանց եւ զվազելն եղջերուաց.
 56. Մեկ փող հարուստ եւ բմբկի հարկանեալ:

ՄԱԳ. Լ. գ.

- 14.— 57. Իբրեւ զտեգն Տրդատ, որ սիգալովն
 58. Աւերեաց զքումբս գետոց եւ ցամախեցոյց
 59. Իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց:

ԱԳԱԹ, 123

Այս երգերի նվաճի մասին աւելորդ չենք համարում տալ մի քանի կարճ բացատրութիւններ:

1. Վահագնի երգն է, որ ներկայացնում է այս աստուածացեալ դիցազնի ծնունդը՝ այլաբանական պատկերով. Վահագնը իրանական *Vahagn*-ն է (Յաղթութեան աստուածութիւն) որ իրանեաներից փոխառութեամբ անցել է մեզ:

2. Վարդգէսի երգն է, որ իւրենացին համարում է Հայկազանց Տիգրան Ա. թագաւորի հօր՝ Նրուանդի ժամանակակից: Թուում է թէ այդ Վարդգէս պատանին սիրահարուել է Նրուանդ թագաւորի քրոջ վրայ և եկել է խնդրելու նրա ձեռքը. և նրա հետ էլ ամուսնացել է:

3-13. Արտաշէսի մեծ երգից հատուածներ են. Ալեանց պատերազմի ժամանակ Արտաշէսը գերի է բռնում թագաւորի որդուն, նրա քոյրը Սաթենիկ բարձրանում է Կուրի ափին՝ մի ժայռի վրայ և խնդրում որ իր սիրու համար արձակէ եղբորը (3): Արտաշէսը լսելով Սաթենիկի խօսքերը և հաւանելով նրան՝ Մարտի միջոցով խընդրում է նրա ձեռքը: Հայրը մերժում է, որովհետեւ Արտաշէսը չպիտի կարողանար վճարել արքայազուտեր համար պահանջուած օժիտը (4): Դրա վրայ Արտաշէսը հեծնում է իր սեռաւ ձին, անցնում է Կուրը և գերելով օրորողին՝ փախցնում է իր բանակը (5): Կատարում է հարսանիք, օրի ժամանակ ոսկի ու մարգարիտ են շաղ տալիս՝ արեւելեան թագաւորների ստղորութեամբ (6): Արտաշէսի ընտանեկան կեանքը բախտաւոր չի լինում. նախ Սաթենիկը անհաւատարմ է Արտաշէսին և ապրիտի ուր է տածում գէպի Արգաւան իշխանը (7): Որդին Արտաւազդ լինում է չար և ըստահակ. այնքան որ երգիչները պատմում են հետեւեալը իրր թէ սկզբում Արտաւազդը լինում է շատ գեղեցիկ մանուկ, որին սասանեաները նախանձելով գողանում են օրորողին և փոխարէն մի գեւի ճուտ են գնում: գեւը մեծանում է և դառնում Արտաւազդ (8): Արգաւանը որին սիրում էր Սաթենիկ թագուհին, ուզում է դաւաճանել թագաւորին և դրա համար սարքում է մի խնձր (9): Արտաւազդը ըմբոստանում է հօր գէմ և վտարանջելով՝ գնում է իր համար չինում Արապկերտ քաղաքը

(10): Արտաշէսի մահուան ժամանակ, երբ շատեր իրենց սիրելի թագաւորից չբաժանուելու համար, ողջ ողջ թաղում էին նրա հետ, Արտաւազդը նախանձելով՝ գահալստուեց նրա դէմ (11): Հայրը դադարից անիծեց իւրան. որ քաղքերը տանին նրան Մասիս իսաւր անդունդները բանտարկեն (12), որ և ըստ առասպելին իրօք կատարուեց: Որսի ժամանակ քաղքերը տարին նրան անդունդը և շղթայի զարկին. հաւատարիմ չհիւրը հետեւեցին նրան և սկսեցին կրծի շղթաները, որպէսզի կոտորին ու Արտաւազդը դուրս գայ՝ կործանելու աշխարհը: Բայց այդ շղթաները չեն կոտորուում, որովհետեւ դարբինները զարկում են սալին և մաշում շղթաները նորից զօրանում են: Այս վերջի մասը իւրենացին պատմում է քաղելով առասպելից, բայց բառացի չի գնում: Վերջին հատուածը ներկայացնում է Արտաշէսի կարօտ իղձը հայրենի նաւասարդը տեսնելու (13):

14. Տրդատի երգը տալիս է Տրդատի քաջութիւնը ներկայացնող ժողովրդական մի ասացուած:

Ձիսօսենք այս երգերի տաղաչափական արուեստի մասին, որովհետեւ դա բանահիւսութեան պատմութեան գործն է, և ուղղակի անցնենք լեզուին:

Արդեօք այս հատուածները հարազատ են, այսինքն ներկայացնում են իրօք այն ժամանակի լեզուն, երբ գրուել են, թէ՛ կազմուած են իւրենացու գրչով: Անշուշտ պէտք է կասկածել թէ այս գրուածքները իւրենացու գրչից դուրս եկած լինին. ուրովհետեւ մեծ է տարբերութիւնը իւրենացու յետոսկեղարեան լեզուի և յիշեալ հատուածների մաքուր հայերէնի միջև: Մենք այդ տարբերութիւնը աւելի լաւ պիտի ըմբռնենք յետոյ, երբ յետոսկեղարեան հայերէնի յատկութիւնների մասին խօսենք: Բայց թէ այդ հատուածները իւրենացու գրչից չեն, դրա համար աւելի զօրեղ ապացոյց է նրանց տաղաչափական արուեստը: իւրենացին արձակ է գրում իր պատմութիւնը, ուստի և տաղաչափեալ հատուածները իրը չեն:

Բայց երբ ասում ենք թէ այդ հատուածների լեզուն հարազատ է, պէտք է անեն թաղը իր բացարձակ իմաստով: Հատուածների լեզուն ճշտու նոյն է Ե. գարի

հայերէնի հետ. բայց Ե. զարի հայերէնը չէր կարող ճշտութեամբ լինել Ն. Ք. 180 թուի, այսինքն 5-6 դար առաջուայ հայերէնի հետ: Արդ՝ վիպասանական երգերի հնագոյն կտորները անշուշտ այդ ժամանակից են և հետեւաբար պէտք չէր որ նոյն լինէին Ե. զարի հայերէնի հետ: Այս անելից դուրս գալու համար մենք պէտք է ընդունենք ուրեմն հետեւեալը. — վիպասանական երգերը գրուած էին իրենց ժամանակի հայերէնով. բայց ըստ որում ապրում էին նրանք ժողովրդի մէջ, ուստի դարուց զար հետզհետէ ենթարկուեցին այն ձեւափոխութեանց, որոնք մտել էին հայերէն լեզուի մէջ: Օրինակի համար եթէ վահագնի երգի մէջ հուր հեռ բառերը այն հընադոյն ժամանակ *pur per* ձեւի ունէին, հետեւեալ անցան այն բոլոր ձեւերից՝ որ կրեց իս բազմաշնորհ վերջապէս հասնելու համար ի ձեւին: Ճիշտ այնպէս, ինչպէս նոյն երգի յաջորդ տողի մէջ մենք այսօր կարգում ենք մօռու, առանց նոյն իսկ իմանալու թէ հին ձեւը մաւրո՞ւն էր թէ մօւրու, բայց հաստատ իմանալով հանգեր թէ անշուշտ մօռու չէր:

Վերջապէս կարելի է նոյն իսկ որ խորհացու և Մագիստրոսի ժամանակ այդ երգերը ճշտութեամբ չհնչուէին՝ ինչպէս գրուած են, այլ մի քիչ տարբեր արտասանութեամբ, և խորհացի և Մագիստրոսը վերածած լինէին իրենց իմացած գրական հայերէնի արտասանութեան: Այսպէս ենք անում այսօր մենք էլ. երբ լսում ենք ժողովրդի բերինց՝

Առաւօտուն կ'ենէս, երեսդ վըւս,
ամենակ հանգստութեամբ թղթի վրայ արծանագրում ենք՝

Առաւօտուն կ'ենէս, երեսդ լուս(*):
Մի քանի տեղ յայտնապէս երեւում են խորհացու սրբազրուածները, օրինակ՝ Արտաշէսի երգի վերջում ի մէջը, ի մէջը, զմէջը փխ. զվէս և հասուցանելով փոխանակ հասուցեալ յետին ձեւափոխութեաներ են: Սաթնիկի երգի մի մասը (տող 19-21) ամբողջովին խորհացուց է անշուշտ:

(Եւր.)

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(*) Զեբաղ, Ազգային Գասփարականութիւն, Պօլիս, 1876, էջ 98:

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՑ

ՀԱՊԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Պիլոսը հրաճարակուով *Le Jour* քերթը իր Յունիս 4 բուլի մէջ եւ *Le Soir* քերթը իր Յունիս 7 բուլի մէջ հրաճարակած են հետեւեալ գրութիւնները Սուրբ Տեղեաց Եւրջ վերջերս յարուցուած նոր եւ տարօրինակ վեճի մը մասին:

Կ'աւատարկեմ զանոնց նոյնութեամբ, եւ կը հրաճարակեմ այն յայտարարութիւնները զորս Ամենապաշխ Ս. Պատրիարք Հայրը բնութեւն Տեղեաց Սեւոսեանի, անոնց շօտափած հարցին Եւրջ:

Pour la protection des Lieux Saints

Cité du Vatican, le 3 june AFP

Une note a été adressée le 4 mai dernier par la délégation romaine de la Custodie de Terre Sainte à toutes les puissances intéressées dans la question de la Palestine, a révélé à la presse le père Zanella, chef de cette délégation, qui a ajouté que dans cette note, remise aux représentants diplomatiques de la France, de la Grande-Bretagne, des Etats-Unis, de l'Egypte et des autres pays de la Ligue arabe, ainsi qu'au Grand-Rabbin de Rome, pour qu'elle soit transmise à l'Agence juive, les pères Franciscains, qui ont la garde des Lieux Saints depuis le XIIIème siècle, demandaient une intervention auprès des deux parties en conflit en vue du respect de ces Lieux, ainsi que des œuvres confiées à ces religieux.

La Custodie recommandait également que des pressions soient exercées pour aboutir à une trêve. Le délégation romaine de la Custodie a appuyé en outre auprès de l'ONU la constitution de Jérusalem en ville libre, demandant que le mandat de cette administration soit confié à la Custodie, «qui, pour être présente en Palestine depuis le départ des Croisés, jouit d'un prestige incontestable tant auprès des Arabes musulmans que des Juifs, et suggérant l'envoi de vivres et de médicaments pour les malades, les enfants, et les vieillards de Palestine, ainsi que la création d'une milice à qui serait confiée la protection des Lieux Saints.